ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Մեժլումյանի և Արմեն Ֆերոյանի,

քննության առնելով փաստաբանների վերապատրաստման և հավակնորդների ուսուցման ծրագրերի ուղենիշները հաստատելու մասին հարցը,

հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 45.4-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի, Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 26-րդ ենթակետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին մասի 2-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի պահանջները միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հաստատել փաստաբանների վերապատրաստման և հավակնորդների ուսուցման ծրագրերի ուղենիշները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 02.04.2012թ. թիվ 12/15-Լ որոշումը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

05 օգոստոսի 2019թ.
թիվ 16/13-Լ
ք. Երևան